ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆ

2015 թ. դեկտեմբերի 8-ին կյանքի 89-րդ տարում իր մահկանացուն կնքեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գևորգ Աբելի Բրուտյանը:

Հայ մեծանուն գիտնական, ՀՀ ԳԱԱ իսկական անդամ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Բրուտյանը ծնվել է 1926 թ. Իջևանի Սևքար գյուղում: Ուսանել է ճարտարագիտություն, միջազգային հարաբերություններ, բանասիրություն և փիլիսոփայություն Երևանում և Մոսկվայում: 1951 և 1961 թթ. Մոսկվայի պետական համալսարանում Գ. Բրուտյանը պաշտպանել է թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ՝ դառնալով իր փիլիսոփայության ամենաերիտասարդ դոկտորը Խորհրդային Միությունում:

Անուրանալի է Գևորգ Բրուտյանի ավանդը գիտության և կրթության գործի կազմակերպման բնագավառում: Նա հիմնադրել և ղեկավարել է մի շարք առաջատար ամբիոններ և գիտական կազմակերպություններ. եղել է Երևանի Վ. Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտի փիլիսոփայության (1962-1970) և Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնների հիմնադիր վարիչը (1970-1986): Մեծ դեր է ունեցել ԵՊՀ փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ստեղծման և կայացման գործում: 1971 թ. ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1982-ին՝ ակադեմիկոս:

1977 թ. Գ. Բրուտյանն ընտրվել է ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: 1994-2002 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարը և փոխնախագահը:

Չնայած առաջացած տարիքին՝ Գ. Բրուտյանը մինչև կյանքի վերջը հավատարիմ էր գիտնականի բարձր կոչմանը, աշխատում էր անխոնջ ու եռանդուն, շարունակում հարուստ փորձն ու կարողությունները ներդնել հայրենական և համաշխարհային գիտության զարգացման գործում՝ Հայկական պետական մանկավարժական համալսարանում ղեկավարելով իր հիմնադրած Մետափիլիսոփայության, փոխակերպական տրամաբանության և փաստարկման

տեսության միջազգային գիտահետազոտական ինստիտուտը և վարելով ՀՀ ԳԱԱ նախագահության խորհրդականի պաշտոնը:

Գ. Բրուտյանը հեղինակ է աշխարհի 20 լեզուներով հրատարակված ու թարգմանված ավելի քան 60 մենագրությունների, գրքերի ու դասագրքերի, շուրջ 200 գիտական հոդվածների:

Անվանի գիտնականը հիմնադիր և հեղինակ է գիտական մի շարք ուղղությունների: Համաշխարհային գիտության մեջ նրա անունով են կոչվում մի շարք մեթոդաբանական սկզբունքներ ու հայեցակարգեր, որոնցից են՝

ա) բազմատրամաբանության հայեցակարգը,

բ) փոխակերպական (տրանսֆորմացիոն) տրամաբանությունը,

գ) լեզվաբանական լրացչության սկզբունքը,

դ) համաշխարհային լայն ճանաչում ունեցող փաստարկման տե-ության բրուտյանական հայեցակարգը և նրա հիմնադրած Փաստարկման երևանյան դպրոցը:

Մեծ է Գ. Բրուտյանի ներդրումը հայ փիլիսոփայական մտքի հիմ-նահարցերի և հայագիտության մեթոդաբանական սկզբունքների մշակման բնագավառում:

Տարիներ շարունակ ղեկավար պաշտոններ վարելով գիտության և կրթության տարբեր օղակներում՝ ակադեմիկոսը ծանրակշիռ ներդրում է ունեցել գիտնականների երիտասարդ սերնդի դաստիարակության, փիլիսոփայության, տրամաբանության, սոցիոլոգիայի և քաղաքագիտության բնագավառներում գիտական նոր հերթափոխի պատրաստման գործում: Անուրանալի է նաև նրա ավանդը համաշխարհային գիտական հանրությանը Արցախի հիմնախնդրի և արդարացի լուծման ուղիների ներկայացման, ինչպես նաև Թուրքիայի՝ հայերի նկատմամբ իրականացրած ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրում համաշխարհային հռչակ վայելող գիտնականների ներուժի կազմակերպման ասպարեզում:

Գ. Բրուտյանը հիմնադրել ու ղեկավարում էր Փաստարկման միջազգային ինստիտուտը, Հայոց փիլիսոփայական ակադեմիան, Փիլիսոփայության միջազգային ակադեմիան՝ նոր ուղիներ հարթելով և գիտական հորիզոններ բացելով երիտասարդ գործընկերների համար:

Նա Համաշխարհային գրական ակադեմիայի ցկյանս անդամ էր (Մեծ Բրիտանիա, 1990), Լոնդոնի դիվանագիտական ակադեմիայի հիմնադիր անդամ (Մեծ Բրիտանիա, 2000), արժանացել է ԽՍՀՄ, Հայաստանի և արտասահմանյան մի շարք երկրների պետական պարգևների, բազմաթիվ առաջատար համալսարանների և միջազգային ինստիտուտների պատվավոր կոչումների ու պարգևների:

Որպես ճշմարիտ փիլիսոփա՝ Գևորգ Բրուտյանը սիրում էր կյանքը: Նա հյուրասեր, կենսախինդ, սուր միտք ու նուրբ հումոր ունեցող անհատա-

կանություն էր: Միրում էր ուրախանալ և հպարտանալ իր սաների, գործընկերների հաջողություններով, շնորհավորել նրանց, իսկ երբ խոսքն իր անձին էր վերաբերում՝ սակավապետ էր կենցաղում, խուսափում էր անգամ իր ծննդյան տարեդարձները շուքով ու բազմամարդ, առավել ևս հանդիսավորությամբ նշելուց:

2006 թ. սաների ու բարեկամների համառ ջանքերով հաջողվեց կազմակերպել ակադեմիկոս Գ. Բրուտյանի ծննդյան 80-ամյակի հանդիսությունը: Գիտական, հետազոտական ու կրթական բազմաթիվ հաստատությունների, պետական և ոչ պետական կառույցների, սաների ու գործընկերների, աշխարհի ամենատարբեր անկյուններից ստացված շնորհավորական ուղերձներն ու բարեմաղթանքները հաջորդում էին միմյանց: Իրեն ու իր վաստակին ուղղված գնահատանքի խոսքերից և բարեմաղթանքներից շոյված ակադեմիկոսը պատասխան խոսքում հանդիսության բոլոր մասնակիցներին ու շնորհավորողներին հրավիրեց մասնակցելու իր ծննդյան 100-ամյակի հանդիսություններին՝ իրեն բնորոշ հումորով հավելելով, որ եթե հարգելի պատճառով բացակայի, հրավիրյալները շատ չտխրեն և ուրախանան միմյանց ներկայությամբ: Ցավոք, գիտական հանրությունը, նրա սաներն ու բարեկամներն առիթ չունեցան կենդանության օրոք նշելու Գ. Բրուտյանի 90-ամյակը:

Այնուհանդերձ, մխիթարական է, որ ապրելու բրուտյանական կերպը, փիլիսոփայելու նրա ոճը, հայրենիքին ու գիտությանն անմնացորդ նվիրվելու նրա ավանդը, գիտության մեջ նրա ծանրակշիռ վաստակը շատերին են ոգևորել, ուղղորդել և առաջնորդելու են այսուհետ ևս:

Մեծ գիտնականի, մանկավարժի և քաղաքացու անունը ոսկե տառերով է գրվել հայ և համաշխարհային գիտության պատմության մեջ:

Ակադեմիկոս Գևորգ Բրուտյանի հիշատակը վառ կմնա գործընկերների, սաների և նրան ճանաչողների սրտերում:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հ. Օ.
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու